Հայտարարություն

Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 2 «Շուշան» մանկապարտեզ ՀՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ հետևյալ մանկավարժական աշխատողի ընտրության համար.

Երաժշտության դաստիարակ՝ 1,5 դրույքային միավոր:

Մրցույթն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվելու է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի, իսկ հարցազրույցը՝ հաստատության կազմած հարցաշարով: Յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:

Երաժշտության դաստիարակի որակավորման պահանջները՝

1) միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն կրթություն նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի որակավորմամբ և երաժշտական կրթություն (երաժշտական կամ արվեստի դպրոց).
2) դպրոցահեն նախակրթարաններում նաև՝ «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին բավարարող անձը, որը տվյալ դպրոցում դասավանդում է «Երաժշտություն» առարկան:

Դիմող քաղաքացիները թիվ 2 «Շուշան» մանկապարտեզ ՀՈԱԿ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) դիմում (Ձև 1),
2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ),
3) անձը հաստատող փաստաթուղթ,
4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում),
5) ինքնակենսագրություն (Ձև 4),
6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական,

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են 2026թ. հոկտեմբերի 15-ից մինչև նոյեմբերի 11-ը ներառյալ, բոլոր աշխատանքային օրերին ժամը 09:00-ից 17:00-ն:

Մրցույթը կկայանա 2026 թվականի նոյեմբերի 13-ին ժամը 11:00-ին Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 2 «Շուշան» մանկապարտեզ ՀՈԱԿ-ում /հասցեն՝ ք. Էջմիածին, Վազգեն Առաջին 68/1/:

Տեղեկությունների համար զանգահարել (374)95646961 հեռախոսահամարով: Հասցե՝ ք. Էջմիածին, Վազգեն Առաջին 68/1, էլ. հասցե՝ tiv2shushan@mail.ru